ԱՄՓՈՓԻՉ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՔԱՆԱՔԵՌԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Հունիսի 21-ին տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ հովանու ներքո գործող Քանաքեռի մանրանկարչական արվեստի դպրոցի ամփոփիչ ցուցահանդեսն ու յոթ շրջանավարտներին ավարտական վկայականների հանձնման արարողությունը:

Քանաքեռի մանրանկարչական արվեստի դպրոցը հիմնադրվել է 1993 թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության շրջանում: Այն այսօր ունի երկու մանրանկարչական և մեկ գեղանկարի դասարաններ, ուր ուսանում են 4-22 տարեկան 75 երեխաներ և երիտասարդներ:

Հանդիսությունը բացվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո ներկաներին բարի գալուստ մաղթեց մանրանկարչական արվեստի դպրոցի տնօրեն Անահիտ Սեդրակյանը: Նա շնորհակալություն հայտնեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հայրական մշտական հոգածության համար, ինչպես նաև իր գնահատանքը հայտնեց Հայորդյաց տների կենտրոնական կոմիտեին, դասախոսական կազմին և ծնողներին: Շնորհավորելով մանրանկարչական դպրոցի շրջանավարտ 7 սաներին՝ նա հույս հայտնեց, որ դպրոցում ամբարած համակողմանի գիտելիքները, փորձառությունն ու գեղեցկի, բարու նկատմամբ սերը կօգնեն նրանց հետագա կյանքում ևս:

Այնուհետև ներկաներին ողջունեց և իր օրհնությունը բերեց Հայորդյաց տների հոգևոր տեսուչ Հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը: Հայր Սուրբն իր գնահատանքը հայտնեց դպրոցի պաշտոնեությանը, ուսուցչական կազմին և ուրախությամբ նշեց, որ եզակի այս դպրոցի աշակերտներին հնարավորություն է տրված մանրանկարի միջոցով հաղորդակցվելու սուրբգրային պատմություններին, Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր հարուստ ժառանգությանն ու մեր հայրերի հավատքին:

Ավարտական վկայականների հանձնումից հետո ներկաները ծանոթացան ցուցահանդեսի ցուցանմուշներին, որտեղ ներկայացված էին միջնադարյան մանրանկարների մի շարք կրկնօրինակներ, մանրանկարների ինքնուրույն ստեղծագործություններ և գեղանկարներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ